



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Եւրոպ  
ԱԿՆ - Գրադր

9964

Հայերն ԱՏերիկայում

335

Ա-39

Արևիկ

1893

2010

Սօցիալիստական Գրադարան.

335 ա

Ա-39



# ՀԱՅԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

ԱԿՆ — ԵԱՅՅԻ.

41

Արտատպւած «Հնչակեց»

Լ

Ինչ է ԱՅԵՐՆԵՐԻ ՎԱՐՁ.

Թարգմանութիւն

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻՑ

Գինը 15 սանտիմ.

12001

(  
1006  
2852  
9158  
21

80!  
2020

ԿԵ  
ԿԵ

ԱԹԵՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ

1893

30333-42

Ս. Գ. Կ. Բուսաբանություն

Ֆիզիոլոգիա. Բուսաբանություն

Գրադրություն

921 շաբաթ 1

Օ. Տրամբուր

### Հ Ա Յ Ե Ր Ն Ա Մ Ե Ր Ի Կ Ա Յ Ո Ւ Ր

#### I

Ամերիկաբնակ հայերի այժմեան կեանքը ներկայացնում է բաւական հետաքրքիր կողմեր եւ խորհրդածութիւնների առիթ տալիս: Յայտնի է, որ Նոր Աշխարհի հայ գաղթականութեան թիւն այժմ հասնում է մինչեւ 10 հազարի: Այդ պատկառելի բանակութեան մեծամասնութիւնը, գլխաւորապէս իմբված Միացեալ Նահանգներում, գործարանային բանւոր է զանազան քաղաքներում: Հայրենիքից նոր եկած, ընկնելով կեանքի բոլորովին տարբեր հանդիմանքներում, հայ արհեստաւորը տեսնում է Ամերիկայում, ուր մեքենայի շնորհով ունչացած են ձեռագործ արհեստները, իր արհեստը լինի դա կոշիկարի, դերձակի և այլն, զրօյի, չեղածի տեղ է Մինչդեռ նա տեսնում է միեւնոյն ժամանակ, որ միւս կողմից, կրկին արդիւնաբերական մեքենայի շնորհով, աշխատանքն այնքան բաժանումների է ենթարկվել, որ ամենքն, արհեստ ունեցողն ու չունեցողը, տղամարդը, կինը, երեխան, կարող են լինել աշխատաւոր միատեսակ կերպով: Նրանցից ոչ մէկ արհեստ, ոչ մի մասնագիտու-



13034-58

8020

Թիւն չէ պահանջվում: Նրանք պէտք են գործարանում  
 իբրեւ միայն ֆիզիքական ոյժ ունեցողներ, իբրեւ մեքե-  
 նայի մէկ անիւր, մի թեւը, մի մասը: Օրինակ, ենթադր-  
 րենք, թէ գաղթած հայը կօշկակար է: Նրա կօշկակա-  
 րական արհեստը մազաչափ օգուտ էլ նրան չի տալ,  
 եթէ նա վարձով կօշկակարական մի գործարանում: Ո-  
 րովհետեւ գործարանում նա չէ կարելու ո՛չ միայն մէկ  
 ամբողջ կօշիկ, ինչ անում էր երկրում, այլ եւ աշխա-  
 տանքն այնքան ձեւակերպվել կերպարանափոխվել է,  
 այնքան բաժանումների է ենթարկվել եւ միեւնոյն ժա-  
 մանակ այնքան պարզվել իւրաքանչիւր աշխատաւորի  
 համար առանձնապէս, — թէեւ խիստ բարդվել իր ընդ-  
 հանուրի մէջ, — որ մեր հային վիճակվում է գործարա-  
 նում կատարելու մի շատ չնչին գործողութիւն: Գիցուք  
 թէ նրան վիճակվում է առաւօտեանից մինչեւ երեկոյ  
 միայն պտտեցնել մի յատուկ մեքենայ, կօշիկ կաշիին միմի-  
 այն հարթ թուղիւն տալ ու աշխատանքը լրացնե-  
 լով: Այն գիտութիւնը, որ մեր հայն ունէր ձեռագործ ար-  
 հեստի մէջ, այլ եւս գործադրվելու տեղի չէ ունենում,  
 յայտնվում է աւելորդ. նրա դերը նոյն աջողութեամբ կա-  
 ըող է կատարել նաեւ մէկ ուրիշը, որ երբէք ո՛չ մի  
 հասկացողութիւն չէ ունեցել կօշկակարական արհեստի  
 մասին: Այդպիսով, ընկնելով միշտ գոյնօրինակ հանգա-  
 մանքներում, ամերիկաբնակ բանւոր հայերը, կորցը-  
 րած իրանց արհեստը, որը գործադրում էին իրանց  
 երկրում, դառնում են գործարանական բանւոր, դառ-  
 նում են պրօլէտարի, այսինքն վարձու աշխա-  
 տաւոր, որ զուրկ է սեփականութիւնից եւ որի ապրուս-  
 տի միակ աղբիւրն իր ստացած վարձն է, իր աշխա-  
 տանքի վճարն է:

Յետոյ: Նոր գաղթած հայը, որ ընկնում է մէկ ար-  
 դիւնաբերական երկրի հանգամանքներում, տեսնում է,

որ տեղացի բանւորների թիւն այնքան շատ է, որ նը-  
 րանցից բաւական մաս ստէպ անգործ է: Եւ դա այն  
 պատճառով, որ գործարաններում բանւորների հարկա-  
 ւոր բանակութիւն արդէն լինելով, նոր ձեռքերի աշխա-  
 տութեան պահանջ չը կայ: Բանւորների այն մասը, որ  
 միշտ աշխատանք չունի, որ ստէպ մնում է անգործ, գի-  
 տական յճով կոչվում է «պահեստի բանւորա-  
 կան զօրք»: Այդ «զօրքը» շարունակ մրցում է գործ  
 ունեցող բանւորների հետ. այդ «զօրքի» անհատները գոր-  
 ծատէրերին առաջարկում են իրանց ֆիզիքական ոյժն ա-  
 ւելի աժան գնով, աւելի աժան վարձով, քան գործա-  
 րաններում բանողներն են ստանում: Գործատէրերին, ի  
 հարկէ, այդ շատ ձեռնտու է, քանի որ աւելի քիչ վար-  
 ձով նրանք կարող են ստանալ աշխատանքի միեւնոյն ար-  
 դիւնքը: Նա ընդունում է նորերին եւ արձակում իր մօտ  
 եղածներին: Խօսք չը կայ, որ բանւորների այդ մրցումն  
 իրար հետ որքան նպաստում է գործատէրերին, նոյնքան  
 վնասում է իրանց, եւ դա այն պարզ պատճառով, որ  
 բանւորական աշխատանքի գինն ընկնում է: Բայց բան-  
 ւորները չեն կարող միմեանց հետ չը մրցել. — ամեն-մե-  
 կըն ուզում է գործ ունենալ, որովհետեւ ամեն-մէկը  
 բացի իր ֆիզիքական ոյժից՝ ուրիշ ոչինչ չունի իրան սե-  
 փական եւ այդ ոյժը ծախելով է միայն, որ նա կա-  
 ըող է հայթայթել իր ապրուստը: Ուրեմն, բանւորների  
 մէջ եղած մրցումը գոյութեան խնդիր է: Բայց եթէ  
 լինէին յայտնի նպատակայարմար օրէնքներ, օր., աշխատան-  
 քի ժամերի քիչացում օրւայ մէջ, շատ անգործ բանւոր  
 գործ կը գտնէին եւ բանւորների մրցան աստիճանն ըզ-  
 գալի կերպով կիջներ: Կառավարութիւնները սակայն այդ-  
 պիսի օրէնքներ չեն տնօրինում, որովհետեւ դա ձեռնտու  
 չէ գործատէր, կապիտալիստ դասակարգին, որի ներկա-  
 յացուցիչներն են այժմ քաղաքակրթված երկրների կա-

ուվարութիւնները: Ահա երեք տարիից ի վեր իւրաքան-  
չիւր տարի բոլոր քաղաքակրթված երկրներում մայիսի  
մէկին տեղի ունեցող բանուրական ցոյցի գը-  
խաւոր նպատակներից մէկն էլ այդպիսի օրէնքի—ժամե-  
րի քիչացում—ձեռք բերելն է:

Այստեղ տեղը չէ այդ բոլորի մանրամասն բացատը-  
րութեան մէջ մտնելու: Մենք ասացինք այդ բոլորը  
ցոյց տալու համար, թէ ինչ վիճակի մէջ է ընկնում  
հայը, երբ գնալով արդիւնաբերական երկրներ, դէմ առ  
դէմ է կանգնում այդպիսի հանգամանքների. — նա էլ  
անցնում է «պահեստի բանւորական զօրքի» շարքերը և  
աւելի աժան գնով է առաջարկում, «ծախում», գործա-  
ւէրերին իր աշխատանքը: Գործատիրական, կապիտալիստ  
դասակարգի համար, — ասենք ի միջի այլոց, որպէս և  
բանւորական դասակարգի համար, — աղգայնութեան  
խնդիր չը կայ: Գործատէրին պէտք է աշխատաւոր և  
նա վարձում է այն աշխատաւորին, որը յանձն է  
առնում աւելի աժան գնով աշխատելու յայտնի քանա-  
կութիւն ժամեր: Օտար երկրներից եկած բանւորներն  
առհասարակ գործատէրերի «ուզած» մարդիկն են այդ  
տեսակէտից: Գաղթած իրանց երկրից, օտարականները  
գործ գտնելու համար աւելի աժան գնով են ծախում  
իրանց ֆիզիքական ոյժը: Յայտնի է, ոչ իտալացիները,  
բելգիացիներն այդ տեսակէտից ֆրանսիայի գործատէրե-  
րի համար որքան ձեռնտու մրցակից են ֆրանսիացի  
բանւորների հետ: Բելգիացի գործարանատէրերից մի  
քանիսը մինչև և անգամ չինացիներն են բերել տա-  
լիս, որոնց շատ աւելի աժան գնով են բանեցնում,  
քան տեղացի, բան գաղթած ֆրանսիացի, իտալացի բան-  
ւորներին: Այդ ընթացքը ծառայում է, ուրեմն, ի վը-  
նաս գործարանատէրերին հայրենակից բելգիացի բան-  
ւորների, թողնենք արդէն մի կողմ ֆրանսիացի, իտա-

լացի ևւ այն բանւորներին: Այդ էլ բուրժուազական,  
գործարանատէր դասակարգի «հայրենասիրութիւնն» է.

— շահի խնդիր... Այսպէս, արդիւնաբերական երկիր  
գաղթած հայը վարձվելով գործարանում, վարձվում է  
այն կերպով, ոչ գրաւում է մէկ ուրիշ տեղացի—Ամե-  
րիկացում, ասենք, ամերիկացի—բանւորի տեղը, որ նրա-  
նից քիչ աւելի վարձ էր ստանում:

Սակայն բաւական չէ այդ կայ մէկ ուրիշ հանգա-  
մանք ևւս, որ հայ բանւորին Ամերիկայում որքան գոր-  
ծատէրերի «ուզած» մարդն է դարձնում, այնքան «ատե-  
լի» է դուրս բերում տեղացի բանւորների աչքին: Այդ  
երկրորդ հանգամանքը գործադուլն է: Յայտնի է,  
թէ, ինչպէս բոլոր արդիւնաբերական երկրներէ բանւոր-  
ները, նոյնպէս ամերիկացի բանւորներն ունեն իրանց սին-  
դիկատները, բանւորական ընկերութիւնները: Այդ  
ընկերութիւնները բոլորն էլ ինքնօգնութեան ըն-  
կերութիւններ չեն միայն, որ իրանց անդամներին լոկ  
փոխադարձ դրամական ևւ այլ օգնութիւն տալու նպա-  
տակով կազմված լինէին: Մեղանում բանւորական սին-  
դիկատների մասին առհասարակ այդպիսի կարծիք են կազ-  
մած, որ սխալ է: Բանւորական սինդիկատների ամենա-  
մեծ թիւն այնպիսիներն են, որոնք գիտակ իրանց՝ բան-  
ւորական դասակարգի շահերին, գիտեն նաև, որ այդ  
շահերն արմատական կերպով հակառակ են բուր-  
ժուազական, գործարանատէր, կապիտալիստ դասակարգի  
շահերին. գիտեն, որ բանւորական դասակարգի, մարդ-  
կութեան այդ ահագին մեծամասնութեան, շահերին ճըը-  
մարիտ գոհացում տալու համար պէտք է հիմնովին  
օչնչացնել ներկայ հասարակական կարգերը, որոնք  
մարդկութեան յետագայ զարգացման այլ ևւս արգելք  
են, ևւ հաստատել նոր երբ շաւաքական, հա-  
մայնական սկզբունքների վրա: Ներկայ պատմական շըը-

ջանի իրական ընթացքը ներկայացնում է համայնական դրոթիւնն իբրեւ իր բնական յաջորդը, որ իրերի զօրութեամբ կոչված է շարունակելու մարդկութեան յետագայ ամեն կողմի առաջադիմութիւնը: Այդպիսի սինդրիկաւաները, որոնք, ասացինք, գիտեն բանւոր դասակարգի պատմական կոչումը, շարունակ կուէի, պատերազմի մէջ են կառավարութիւնների ու բուրժուազական դասակարգի հետ, ներկայ հասարակական ամբողջ նիստ ու կացի հետ, եւ կազմում են իրանցից սօցիալիստական զորագնդերը: Այդպիսով, ուրեմն, նրանք ծառայում են ոչ թէ միմիայն իրանց սինդրիկատի անդամների օգտին, այլ եւ ամբողջ բանւոր դասակարգի, այլ եւ ամբողջ մարդկութեան օգտին: Այդպիսի սինդրիկաւաները ստէպ պահանջում են կառավարութիւններից այնպիսի բարեւաւումներ (այդ բարեւաւումներն, ի վերջոյ, ժամանակաւոր են, քանի որ էական, արմատական չեն), որոնք նրանց աւելի միջոց տային պատերազմի վերջում իրանց գլխաւոր ու միակ նպատակի համար, այն է՝ հասարակական ներկայ կարգերի արմատական փոփոխման: Բայց նրանք ստէպ դիմում են գործադուլի, պահանջելով կամ օրւայ ժամերի բիւջացում, կամ օրավարձի աւելացում, կամ գործարանի կանոնադրութեան՝ բանւորներին ոչ ձեռնտու այս կամ այն կէտի ոչնչացում եւ այլն: Այդ գործադուլները կատարվում են միշտ ամենաճանր զբոսանքների գնով, ամենամեծ զոհողութիւնների, երբեմն կեանքի գնով բանւորների համար: Բանւորական պահեստի «զօրքի» անհատներն այդպիսի գէպքերում ահա յայտնվում են այն գործարանատէրի մօտ, որի բանւորները գործադուլ են արել, եւ աժան գնով առաջարկում են նրան իրանց Ֆիզիքական ոյժը: Ի՞նչ է լինում դրա հետեւանքը: Այն, որ գործատէրը դարձեալ կարողանում է շարունակել իր գործը, մինչդեռ գործա-

թողներն այդպիսով կորցնում են իրանց դատը, վնասվում, նիւթապէս իսպառ քայքայվում, գործածելով իրանց սինդրիկաւաների գանձարանի ամբողջ հարստութիւնը, վերջապէս՝ մատնվում անօթութեան: Ի՞նչու: Արդհետեւ մենք գիտենք, որ նրանց պարուստի միակ միջոցը իրանց Ֆիզիքական ոյժն է, որ ծախելով ստանում են աշխատանքի վարձ: Բայց ներկայումս արդիւնաբերական երկրներում գործադուլների ժամանակ գնալով համեմատաբար աւելի ու աւելի սակաւ է պատահում, որ պահեստի «զօրքը» գար գործաթողների տեղը բռնէր: Եւ դա շնորհով այն հանգամանքի, որ բանւորների ահա գին մեծամասնութիւնը սինդրիկաւաների անդամ է եւ նրանք չեն խախտում իրանց համերաշխութիւնը, թէեւ դա լինէր ամենախիստ զրկանքների գնով: Այդ ժամանակ սակայն օտար երկրներից եկածներն են պատրաստ գործաթողների տեղը բռնելու, թէեւ այդ երեւոյթն էլ գնալով համեմատաբար աւելի ու աւելի սակաւ է պատահում՝ կրկին շնորհով հէնց այն հանգամանքի, որ այդ օտարներն էլ ըստ մեծի մասին ունեն իրանց բանւորական սինդրիկաւաները:

Այդ տեսակէտից սակայն, զժբաղդաբար, բացառութիւն են կազմում ամեն տեղերի, որպէս եւ ամերիկաբնակ հայ բանւորները, պատճառ տալով տեղացի բանւորներին իրանց ատելու: Գործ գտնելու համար նրանք գործատէրին առաջարկում են ստոր գնով իրանց Ֆիզիքական ոյժը, փոխարինելով գործաթողներին: Օրինակներ եղել են շատ, եւ արդէն յայտնի է, որ մէկ-երկու անգամ Ամերիկայում հայերի այդպիսի ընթացքը խիստ բողբոջի հանդիպելով ամերիկացի գործաթողների կողմից, այդ բողբոջը վերջացել է մինչեւ իսկ արիւնով: «Հայի բնածին յատկութիւնն է՝ անմիաբանութիւնը, անհամերաշխութիւնը», կը մակաբերեն հայ հասարակութեան

յայտնի շրջանները եւ դրանով հարցը լուծված կը համարեն: Ի՞նչ ասել կուզէ, որ հասարակական մի շարք խնդիրները, ինչպէս պանդխտութեան հարցը, հայերի մէջ գաղափարական կուսակցութեան երեւոյթը, հայ բանւորների վերոյիշած ընթացքը եւ ղոյնօրինակ ուրիշ հասարակական երեւոյթներ լուծելու շատ դիւրին ու անհնարագէտ միջոց է բոլորն էլ մի պարկի մէջ գըցել եւ պարկը կնքելով՝ վրան գրել — «հայի բնածին անհամբաւելութիւն»: Սակայն դա ոչինչ է արտայայտուած իսկ, բացի այդպէս խօսողների անհասկացողութիւնըն, էլ ուր մնաց, որ մի բան բացատրէր: Ամերիկաբնակ հայ բանւորներն այդպիսի ընթացք ունենալով՝ ղեկավարվում են իրանց գոյութեան խնդրով, եւ այնքան ժամանակ նրանք այդպիսի ընթացք կուենենան, ողբան ժամանակ կապ չեն ունենալ տեղական բանւորական սինդիկատների հետ, որքան ժամանակ հեռու կը պահեն իրանց այդ սինդիկատներից: Ամեն տեսակէտից լաւ կանեն ամերիկաբնակ հայ բանւորն, եթէ իրանց ու տեղական բանւորական սինդիկատների մէջ սերտ կապ հաստատեն, կամ անգամ գրվելով այդ սինդիկատների եւ կամ իրանք կազմելով առանձին սինդիկատներ, որոնք շարունակ յարաբերութեան մէջ լինեն տեղական սինդիկատների հետ, շարունակ շփվեն նրանց հետ: Իրանց Ամերիկայում գտնված ժամանակամիջոցում ամերիկաբնակ հայերն այդ ընթացքին պէտք է հետեւեն տեղական բանւորների հետ: Նախ, որ սինդիկատների անդամ լինելով եւ կամ նրանց հետ սերտ յարաբերութիւններ ունենալով, հայ բանւորներն այնքան ահագին թւով անգործ չեն մնալ, ինչպէս ներկայումս, քանի որ սինդիկատները միշտ ջանք են անում իրանց անգործ անդամների համար գործ գտնել: Երկրորդ. հայ բանւորները, գէթ մեծ մասամբ, պարտաւորված չեն լինիլ իրանց

նմանի հարցը կտրելու պայմանով՝ մի կտոր հարցվաստակել իրանց համար — ներկայ հասարակական կարգերի այդ անողոր օրէնքին յարմարվելու անպայման կերպով — եւ այն էլ ղեռ ստիպվելով իրանց Փիլիբեական դժբ ծախելու ստոր գնով: Բայց ինչ ամենազխտաւոր հետեւանքը կը լինի հայկական շահերի տեսակէտից, եթէ նրանք սինդիկատների հետ սերտ յարաբերութիւն հաստատեն, դա հետեւեալն է. — Սինդիկատների գործունէութեան մէջ հայ բանւորների համբաւելութեան ոգին կը զարգանայ, թէկուզ դրա համար նրանք ստիպված լինեն երբեմն բաժանելու իրանց ընկեր տեղացիների զգանքները գործադուլի ժամանակ, եթէ գործագուլ տեղի ունենայ: Ար զարգանայ նոյնպէս նրանց դասակարգային գիտակցութիւնն, այսինքն այն, որ բանւորներն առանձին ու ամենամեծ դասակարգն են կազմում՝ միւս՝ ունեւոր, բուրժուա դասակարգից հիմնովին տարբեր շահերով ու ձգտումներով: Այնուհետեւ գիւրութեամբ եւ նորիսկ իրանց բանւորական վիճակի թելադրութեամբ՝ կուրացնեն նրանք ժամանակիս ամենաառաջագամ սկզբունքները, մարդկութեան սօցիալական (ընկերական) կեանքի արմատական վերանորոգման գաղափարը, սկզբունքներ ու գաղափար, որոնց աշխարհ բերողն ու կրողը յեղափոխական բանւոր դասակարգն է: Աերջպէս կընտելանան նրանք քաղաքական (politique) կրթութեան, կը զարգանան քաղաքականապէս եւ հագեկան ու մտաւոր անթիւ արգիւնաւոր դասեր կառնեն:

Սերտ յարաբերութիւն տեղական բանւորական սօցիալ-գէմօկրատական սինդիկատների հետ եւ դրա շնորհով համբաւելութիւն իրար մէջ ու ամերիկացի բանւորների հետ — ահա ինչ պէտք է լինի հայ բանւորների ընթացքն՝ Ամերիկայում իրանց գտնված ժամանակամիջոցին:

II

Մեր սոյն գրութեան նախորդ գլխում խօսեցինք ամերիկաբնակ հայերի ստուար մեծամասնութեան, այն է՝ բանւորների մասին միայն նրանց բանւորական շահերի տեսակէտից: Մենք խօսեցինք նաեւ այն հանգամանքի վրա, որ ներկայ քաղաքակրթված երկրներում բանւորական շահերը, արդիւնաբերութեան ոյժերի զարգացման ու նրա կերպերի շնորհով, կատարելապէս համապատասխան են մարդկութեան յետագայ զարգացման ձգտումներին, նրա ընդհանուր բարօրութեան պահանջներին: Աւելի ճիշդ ասելով, ոչ թէ համապատասխան են, այլ հէնց բանւորական շահերն են, հէնց բանւոր դասակարգի ձգտումներն են, որ ներկայումս յայտնվում են մարդկային հասարակութեան յետագայ զարգացման եւ ընդհանուր բարօրութեան պատմական արտայայտութիւնը: Այն կերպերի զօրութեամբ, որոնց մէջ գնալով՝ աւելի ու աւելի է ամփոփվում արդիւնաբերութիւնը, ուրիշ խօսքով՝ շնորհով այն հաւաքական, համայնական կերպերի, որ աւելի ու աւելի մուտք են բերում արդիւնաբերութեան ամեն ճիւղերում, միշտ աճող ուժով քայքայելով արդիւնաբերական զանազան ճիւղերի անհատական ձեռագործ կերպերը, բանւորների դասակարգային ձգտումներն այդ բնական եղանակով հանդիսանում են ձգտումներ դէպի ընդհանուր եղբայրութիւն, ընդհանուր հաւասարութիւն: Արդիւնաբերող դասակարգի գրօշակի վրա, այդպիսով, եղբայրութեան, հաւասարութեան, ճշմարիտ ազատութեան նշանաբանը չէ հանդիսանում իբրեւ վերացական, անիւթ ու լոկ բարոյական պարտականութեան մի ճիշ, ինչպէս էին այդ խօսքերը ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնն անողի ու

նրա հերոսի—բուրժուազիայի, կապիտալիստ դասակարգի—գրօշակի վրա: Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ այն ճիշն իսկապէս արբեցուցիչ աղաղակն էր մի վերացական գաղափարի, որին ոչ միայն չէր համապատասխանում այն ժամանակւայ անտեսական—մարդկային հանրակեցութեան այդ հիմքի—պատմական ընթացքը, այլ եւ այդ ընթացքն ուղղակի նրա հակառակը պէտք է առաջացնէր մտրդկային հասարակութեան մէջ: Այսինքն նա առաջացրեց այն, ինչ տեսնում ենք ներկայ իրականութեան մէջ—երկու մեծ դասակարգ, ծայրապէս իրար հակառակ շահերով, մշտական հակառակութեան, անտագոնիզմի մէջ մէկն իշխող, միւսը ստրուկ, մէկը սեփականատէր, կապիտալիստ, միւսն աղքատ ու զուրկ ամեն սեփականութիւնից, մէկն անգործ, ապրող ու վայելող ուրիշի տշխատանքով, միւսն ապրելու համար ստիպված ծախել իր երկու ձեռքը իր բանող ոյժը, եւ աշխարհիս ամբողջ հարստութիւնների միակ արդիւնաբերող: Այդ երկու դասակարգն են բուրժուազասակարգն ու բանւոր դասակարգը: Առաջինը ներկայացնող անցեալի փառքը, անցեալի առաջադիմութեան կարողութեամբ, ներկայումս իր պատմական դերը կատարած վերջնայն, մարդկութեան յետագայ զարգացման այլեւս վնասաբեր ու արգելք, ինքը քայքայվող ու մեռնող երկրորդը ներկայացնող քայքայի փառքը, ներկայի առաջադիմութեան կարողացալի փառքը, որի պատմական դերը միայն նոր է սկսել, որի բնական ձգտումները՝ համապատասխան իրերի ընթացքին ու ծագած դրանից՝ մարդկութեան առջեւ բանում են կենանքի նորանոր հորիզոններ, ինքը միշտ աճող ու զօրացող: Եւ այդ վերջինի գրօշակի վրա ազատութիւն, եղբայրութիւն ու հաւասարութիւն նշանաբանն այլ եւս այն առաջին դասակարգի վերացական խօսքերը չեն, ա-

սոււմ ենք, այլ արդիւնաբերութեան նոր կերպերի զարգացման հաւատարիմ արտայայտութիւն, որ իր մէջ կրում է մարդկային հասարակութեան կեանքի ճշմարտութեան եւ ընդհանուր բարօրութեան գաղափարը: Մինչդեռ բուրժուա դասակարգի շրթներում Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ այդ գաղափարը միայն վերացական, մետաֆիզիքական (բնազանցական) էր եւ հակառակ իրերի պատմական ընթացքին, ներկայուժը բանւոր դասակարգի շրթներում նա մատերիալիստական (նիւթական) է եւ ինքը բնական արտայայտութիւնն է ներկայ ժամանակիս իրերի պատմական ընթացքի:

Փրանսիական Մեծ Յեղափոխութեան միջոցին ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան գաղափարը բուրժուազիայի շրթներում արձագանգն էր XVIII-րդ դարու Փրանսիական փիլիսոփաների մարգարէական մեծ գաղափարների: Այդ գաղափարներն այն ժամանակ տեսական բողոքներն էին աւատական կարգերի դէմ, որոնք այլ եւս քայքայվում, ճայթում էին, իրանց արգանդից առաջացրած լինելով կերպարանափոխութիւն արդիւնաբերութեան եղանակների մէջ: Արդիւնաբերութեան մինչեւ այն ժամանակ եղած միջոցները սկսել էին աւելի ու աւելի ընդարձակ ծաւալով կենտրոնանալ առանձին անհատների ձեռքը, առաջնցնելով մանուֆակտուրան ու մեծ արհեստանոցները: Արդիւնաբերութեան արդիւնքները, որ մինչեւ այդ ժամանակները լոկ կամ առաջնապէս անհատական արդիւնաբերողի իր սեփական կամ նրա նեղ շրջանի գործածութեան համար էին ծառայում, ընդունում են կապիտալիստի ձեռքի տակ ապրանքի կերպարանք, ապրանք, որ շինվում է արդէն ծախելու համար: Այդպիսով առանձին անհատներին պատկանող արդիւնաբերական միջոցներ

ը դառնում են հասարակական, բայց դառնալով հասարակական, նրանք կրկին պահպանում են փոխանակութեան ու արդիւնքների իւրացման նախկին անհատական կերպարանքը: Առաջանում է ապա մրցութիւնը կապիտալիստների մէջ, ըստ որում նիւթապէս ուժեղը ձգնում է քայքայել նիւթապէս աւելի տկարին եւ իր ձեռքի տակ հաւաքել արդիւնաբերական աւելի ու աւելի շատ միջոցներ: Երեւան է գալիս այդ ժամանակ նոր դասակարգ՝ պրօլետարիատ, վարձու բանող դասակարգը, որ կազմված է լինում նախկին արհեստաւորներից ու գիւղացիներից, որոնք մրցութեան մէջ զոհվել էին ամեն սեփականութիւնից: Պրօլետարիատ դասակարգի ծաւալն ընդարձակվում է եւ ի վերջոյ առաջացնում իր միջից «բանւորական պահեստի զօրքը»: Եւ ահա այդպիսի պատմական ընթացում լսվում է բուրժուա, կապիտալիստ դասակարգի շրթներից ազատութեան, եղբայրութեան ու հաւասարութեան գաղափարը, որ դատապարտված էր յայտնվելու վերացական, աննիւթ, մտացածին, որովհետեւ չէր հիմնված կեանքի իրական պայմանների վրա, որովհետեւ հակառակ էր մարդկանց այն ժամանակայ հասարակական անտեսական յարաբերութիւններին: Այն գաղափարը դատապարտված էր յայտնվելու լոկ վերացական, որովհետեւ բուրժուազիայի պատմական ձգտումն առաջ էր բերել խորին հակասութիւն սեփականատիրութեան կերպի եւ արդիւնաբերութեան միջոցների կերպարանքի մէջ, — առաջինը պահպանելով իր նախկին անհատական ձեռքի մէջ, մինչդեռ երկրորդին տալով հասարակական կերպարանք: Այն գաղափարը դատապարտված էր լոկ վերացական յայտնվելու, որովհետեւ իր Մեծ Յեղափոխութեամբ բուրժուա դասակարգն, իր ձեռքն ունենալով նիւթական իշխանութիւնը, իսկապէս ձգտում էր նոյն

իր ձեռքը գցել նաև քաղաքական իշխանութիւնը, նրա ղեկը, դառնալ իշխող դասակարգ, մինչդեռ միւս կողմից նոյն իր այդ ձգտումը ծնունդ էր տալիս մարդկանց մէջ ամենախիստ անհասարակութեան, չեղբայրութեան, որ տեսնում ենք այժմ: Իսկ ազատութեան նրա նշանաբանը վերաբերում էր միայն քաղաքական ազատութեան, որից էլ գլխաւորապէս ու առաջնապէս օգտուում էր ինքը, մինչդեռ իրապէս — տնտեսապէս — ճորտութեան մէջ էր մղում ժողովրդի աւելի ու աւելի մեծ մասը:

Պրանսիական Մեծ Յեղափոխութեան միջոցին առաջագէմ ու յեղափոխիչ էին բուրժուա, կապիտալիստ դասակարգի ձգտումները, որովհետև այդ ձգտումները բնական արտայայտութիւնն էին արդիւնաբերութեան այն ժամանակաւ կերպարանափոխողը՝ նոր, կատարելագործված կերպերի եւ այդ կերպարանափոխութեան շնորհով ծնունդ առած նոր աշխարհահայեացքի: Բուրժուազիան պատմական տրամաբանութեամբ ձգտում էր վերջնական հարուածը տալ այն ամբողջ շէնքին, այսինքն աւատական կարգերին, որ արդէն իրապէս քայքայված ու աւելորդ էր դարձած եւ այլ եւս խոչնդոտ էր մարդկութեան զարգացման համար: Ներկայումս — Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից մի դար վերջ — նոյն պատմական տրամաբանութեամբ՝ բանւոր, պրօլետարիատ դասակարգն է յայտնվում յեղափոխիչը եւ բուրժուա դասակարգն է հանդիսանում նոյն դերում, ինչ դերում աւատականութիւնն էր առաջ: Բայց բանւոր դասակարգը ձգտելով ձեռք գցել քաղաքական իշխանութիւնը՝ կործանելու համար ներկայ հասարակական կարգերը եւ հաստատելու նորերը՝ դասակարգային իշխանութիւն չէ, որ նա կարող է հաստատել, ինչպէս բուրժուազիան արեց: Որովհետև նա չորրորդ, վերջին ու

Գ  
3

1006  
(28546) 13034-88

ամենամեծ դասակարգն է, որ զուրկ է ամեն նիւթական սեփականութիւնից, որից աւելի ստոր դասակարգ մարդկութեան մէջ այլ եւս չէ կարող լինել եւ որի յաղթանակը կը լինի արդէն իրապէս ամբողջ մարդկութեան յաղթանակը: Արդիւնաբերութեան միջոցները, որ հասարակական բնաւորութեան վերածվեցան բուրժուազիայի իշխանութեան միջոցին, բայց մնացին միշտ անհատական սեփականութեան կերպի տակ այդպիսով իրական հակասութեան մէջ ընկնելով, պրօլետարիատը կը դարձնէ հասարակական, հաւաքակազմ, սօցիալիստական սեփականութիւն հասարակապէս եւ այդ միջոցների արդիւնքներն էլ նմանապէս: Պրօլետարիատի յաղթանակը կը լինի այդպիսով մարդկութեան իսկական աշատութեան, եղբայրութեան, հասարակութեան, ուրեմն եւ ճշմարտութեան յաղթանակը:

Վերև ասացինք, թէ բանւոր դասակարգի ձգտումները բնական արտայայտութիւնն են ժամանակիս իրերի պատմական ընթացքի եւ թէ այդ ձգտումներն իրանց ներքին իմաստի մէջ ունեն մարդկութեան կեանքի ազատութեան, հաւասարութեան ու ճշմարտութեան գաղափարը եւ ոչ թէ այդ գաղափարը մտացածին, վերացական է, ինչպէս էր բուրժուազիական դասակարգի ձրգտումների նկատմամբ: Բայց ի՞նչ է նշանակում, թէ բանւոր դասակարգի ձգտումները բնական արտայայտութիւն են ներկայ իրերի տրամաբանութեան: Փոքր-ինչ կանգ առնենք այդ կէտի վրա, որի բացատրութիւնը միեւնոյն ժամանակ կը պարզէ ու կապացուցանէ, թէ ինչու համար համայնական, սօցիալիստական կազմակերպութիւնը բնական, անխուսափելի կերպով պարզ է ներկայ հասարակական կազմակերպութեան, յաղորդելու նրան հասարակական կազմակերպութեան, որպէս



Մարդկային կեանքի, այսպէս ասած, հիմնաքարը տնտեսականն է, որ գոյութիւնը պահպանելու աղբիւրն է: Ամենից առաջ պէտք է ուտել, հագնուիլ, ուրեմն դրանց համար աշխատանք գործադրել, որպէս զի մարդիկ կարողանային իրանց մտքի առարկայ դարձնել կրօնական, փիլիսոփայական, քաղաքական պարապմունքները: Տնտեսականը, արդիւնաբերութիւնն ունի յայտնի կերպեր, տարբեր միմեանցից մարդկութեան զարգացման իրար յաջորդող կերպարանափոխող շրջաններում: Այդ կերպերը սկսած են ամենատարրականներից եւ անհամար դարերի ընթացքում շարունակ զարգանալով, հասել են ներկայի մեքենայատիպ հսկայական ծաւալին: Ահա հէնց այդ նիւթականն է, արդիւնաբերութեան կերպերն են, որ միշտ եղել են պայման հասարակութեան ամեն կողմի—քաղաքական, իրաւական, մասնաւոր—յարաբերութիւնների: Արդիւնաբերութեան կերպերը, ստեղծելով յայտնի յարաբերութիւններ մարդկանց մէջ, իրանց համեմատ էլ առաջացնում են քաղաքական յարաբերութիւնների շէնքերը, որպէս եւ մարդկանց մասնաւոր կենցաղը: Մարդկանց աշխարհաստեղծութիւնը էլ ստանում է այն ձեւը, կերպարանքն ու իմաստը, որոնք համապատասխան են արդիւնաբերութեան յայտնի կերպերին, պայմաններին ու դրանցից առաջացած հասարակական ու քաղաքական յարաբերութիւններին: Երբ որ արդիւնաբերութեան յայտնի կերպերը սկսում են կերպարանափոխուիլ, ձեւակերպուիլ, բնական զարգացման ընթացքում իրանց միջից առաջացրած լինելով արդիւնաբերական նոր կերպեր, այդ պրօցէսը, այդ արարողութիւնն, այդ ընթացքը՝ հասնելով զարգացման յայտնի աստիճանի՝ քայքայում է արդիւնաբերութեան հին կերպերի համեմատ հաստատված հասարակական ու քաղաքական յարաբերութիւնները եւ ստեղծում է նորերը՝ ար-

դիւնաբերական նոր կերպերի, նոր պայմանների համաձայն: Այդ փոփոխութիւնների հետ միատեղ փոփոխվում է նաեւ մարդկանց փիլիսոփայական, հասարակական ու պատմական աշխարհահայեացքը: Այսպէս, արդիւնաբերութեան պայմանները լինելով հիմքը հանրակեցութեան պայմանների, երբ որ իրանք զարգանալով փոփոխվում են իրանց միջից իսկ բնական կերպով ստեղծված լինելով արդիւնաբերական ուրիշ, նոր պայմաններ, մարդկանց ամբողջ հանրակեցութեան պայմաններն էլ բնական կերպով փոփոխվում են, եւ փոփոխվում են արդիւնաբերական նոր պայմանների իմաստի համաձայն:

Վերկայումս էլ ինչպէս միշտ, արդիւնաբերական պայմանները ենթարկված են շարունակ փոփոխման, կերպարանափոխութեան: Մեքենայի շնորհով աւելի ու աւելի զարգանալով եւ աւելի ու աւելի քայքայելով արհեստաւորական, ձեռագործ արդիւնաբերութիւնը, ներկայ մեքենագործ արդիւնաբերութիւնն արագ կերպով անընդհատաբար ընդգրկում է արդիւնաբերութեան բոլոր ձիւղերը եւ ինքն էլ ընդունում աւելի ու աւելի բարձր, կատարելագործված կերպարանք: Արդիւնաբերութեան պայմանների կերպարանափոխութիւնն ընդունում է համայնական, հաւաքական կերպեր, իր միջից ծնունդ է տալիս այդ պայմաններին, այդ կերպարանքին: Բայց մենք գիտենք արդէն, որ երբ արդիւնաբերութեան պայմանները՝ ստեղծելով իրանց միջից նոր պայմանների տարրեր՝ փոփոխվում են, նրանք անպատճառ իրանց զարգացման նոյն բնական տրամաբանութեամբ պահանջ են առաջացնում նաեւ մարդկային հանրակեցութեան պայմանների կերպարանափոխութեան՝ համաձայն արդիւնաբերութեան նոր, ծագող պայմանների: Ուրեմն, նրանք պահանջում են ներկայ քաղաքական, հասարակական ու



զարգացման, որ շարունակ տեղի կունենայ ազատված Հայաստանում եւ շնորհով աշխատաւոր ժողովուրդի վերոյիշած աշխատութիւններին՝ հնարաւոր ու անհրաժեշտ կը հանդիսանայ այլ եւս սօցիալիստական հասարակական կազմակերպութեան հաստատութիւնը:

Ահա այն պրօբլէմն երբ (problème, խնդիրները), որ հայ բանւորների առջեւ դրել են նոյն իրանց դասակարգի ու գիւղացի ժողովուրդի շահերը, պրօբլէմներ, որ պատմականօրէն բնական կերպով առաջացել են հայութեան կեանքում եւ որոնց նպատակայարմար լուծում տալ կարող են միմիայն հայ բանւորները, հայ աշխատաւոր ժողովուրդը: Գրանից պարզ է, թէ իրանց պատմական այդ մեծ դերը կատարելու համար՝ որքան անհրաժեշտ է հայ բանւորների համար իրանց դասակարգային ինքնաձանաչութիւնը, որքան անհրաժեշտ է նրանց համար՝ ճշգրտաբար որոշել իրանց հասարակական-պատմական մեծ դերը հայ ժողովուրդային դատի նկատմամբ: Իրանց դասակարգային ինքնաձանաչութեան, իրանց հասարակական դերի որոշման համար անսպառ աղբիւր են ներկայացնում առհասարակ բոլոր արդիւնաբերական երկրների բանւոր դասակարգի սօցիալիստական ձգտումները: Հետեւել ուշիմ կերպով առհասարակ այդ դասակարգի ներկայ շարժման, ուսումնասիրել նրա ձգտումներն ու գործունէութիւնը, առնել այդ գործունէութիւնից յեղափոխական, որպէս եւ քաղաքական կրթութիւն, իւրացնել այդ դասակարգի այն է սօցիալիստական սկզբունքները, գաղափարները, աշխարհահայեացքն — ահա հայ բանւորների աշխատութիւնը, որ արդէն բնական կերպով թելադրում է նոյն իրանց բանւորական վիճակը եւ որ՝ իրանց գործունէութեամբ հայկական հողի վրա՝ միանգամայն վճռական դեր կունենայ հայ ժողովուրդային դատի ձգտումների ու

նպատակի որոշման եւ դրանց իրագործման մէջ: Հէնց իրանց բանւորական դրութեան թելադրութեամբ իւրացնելով վերոյիշած ձգտումներն ու սկզբունքները, ամերիկաբնակ, որպէս եւ այլ երկրների արդիւնաբերական քաղաքների, հայ բանւորները ներս կը բերեն հայոց կեանքում հասարակական մի նոր տարր, մի նոր ոյժ, մի նոր հոսանք՝ յեղափոխող այդ կեանքը: Իրանց երկրի տնտեսական ծանր հանգամանքները հազարաւոր հայաստանցիներին այսօր բերել գցել են հեռաւոր Ամերիկան, որտեղ նրանք, ըստ մեծի մասին, մնում են միայն ժամանակաւորապէս, կրկին հայրենիք վերադառնալու մտազրուութեամբ: Արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամերիկական քաղաքական ու հասարակական կեանքն ընդհանրապէս մի դպրոց է ամերիկաբնակ հայերի համար, եթէ միայն նրանք օաղեսի պէս չառանձնանան սեփական անձուկ սահմաններում, այլ հետաքրքրվեն այդ կեանքով դիտեն, հետեւեն նրան: Հայ ժողովուրդի շահերը նրանց վրա պարտականութիւն են դնում, որ օգտվելով իրանց Ամերիկայում ապրած ժամանակամիջոցից, նրանք օգուտ քաղեն իրանց բանւորական վիճակից եւ զինւորված ժամանակիս ճշմարիտ առաջադէմ, յեղափոխիչ սկզբունքներով անցնեն յեղափոխական ասպարէզի վրա իրանց որոշ նպատակներով ու նպատակայարմար գործունէութեամբ:

Պէտք է ասել, որ ամերիկաբնակ հայերի մէջ առհասարակ բաւական զարգացած է երեւում հայ ժողովուրդային գործին ծառայելու ձգտումը: Այսօր նրանց մէջ նկատվում է մի ներքին գործունէութիւն եւ բարոյական ու նիւթական եռանդուն աջակցութիւն յեղափոխական գործող մարմիններին: Շնորհով յայտնի հանգամանքների՝ նրանք ձգտում են կազմակերպվել առանձին խմբերով, իրար մէջ յարաբերութիւն գոյացնել եւ

կապվել գործող գլխաւոր մարմնի հետ: Այդ  
 խմբերին անհրաժեշտ է ունենալ իրանց ներքին կանո-  
 նագիրը, ամենքի համար համատիպ, միեւնոյն սկզբունք-  
 ների վրա հաստատված, ինչ առաջնակարգ կարեւորու-  
 թիւն ունի յեղափոխութեան համար, ըստ որում դա  
 պայման է ոյժերի ընդհանուր գործակցութեան, նրանց  
 համախմբման եւ նրանց ձգտումներին մէկ ուղղութիւն  
 տալուն ու միանպատակ լինելուն: Եթէ ոյժերի այդ նա-  
 խապատրաստութիւնը կատարվէ որոշ ու նպատակայարմար  
 ուղղութեամբ, անցնելով գործի ասպարէզը՝ նրանք ար-  
 դէն զինված կը լինեն իրանց գործունէութիւնը դիւրացը-  
 նող հարկաւոր զէնքերով եւ կը յայտնվեն դէպի նպա-  
 տակը տանող իսկական ուղիի վրա: Կպատակայարմար են  
 նաեւ շատ քաղաքներում տեղի ունեցող ամերիկաբնակ  
 հայերի յաճախակի դումարումները, ուր երբեմն ներկայ  
 է լինում մինչեւ երեք հարիւր ու ավելի հայ բազմու-  
 թիւն եւ ուր խօսում, վիճաբանում ու կարգում են  
 որպէս հայկական դատին վերաբերող հարցերի, նոյնպէս  
 ընդհանուր զարգացում տվող հասարակական նիւթերի  
 մասին: Պէտք է խոստովանվել սակայն, որ այդ բոլորը  
 կատարվում են շատ անգամ բաւական տարրական կեր-  
 պով եւ երբեմն շնորհով պառակտող տարրերի՝ տեղի  
 են տալիս անօգուտ վիճաբանութիւնների: Եթէ իրանց  
 ժողովներում նիւթերի աջող ընտրութիւններ ու աջող  
 մեկնութիւններ լինեն, ի հարկէ, այն ժամանակ այդ  
 ժողովները կը հասնեն իրանց նպատակին եւ միշտ մը-  
 տածութեան առարկայ կը տան ունկնդիրներին:

Որպէս այդ ժողովներին, նոյնպէս ամերիկաբնակ հա-  
 յերի գործելու ձգտումներին պէտք է տալ որոշ ուղ-  
 ղութիւն՝ համապատասխան հայ ժողովուրդային դատի ի-  
 մաստին: Այդպիսի ուղղութիւն տալու համար պէտք է իւ-  
 րացնել այն սկզբունքները, որոնց մասին խօսեցինք ներկայ

յօդուածում: Համապատասխան կերպով փոխադրված լի-  
 նելով հայկական հողի վրա՝ իր յաջորդական աստիճան-  
 ներով ու նպատակներով այդ սկզբունքներն առաջնորդ  
 են հանդիսանում հայ առաջադէմ, ճշմարիտ յեղափոխա-  
 կանների գործունէութեան մէջ, որով եւ պատրաստում  
 են հայ աշխատաւոր ժողովուրդի յաղթանակը:



### ԻՆՉ Ի ԱՅԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉ

ԵՒ

### ԻՆՉՊԵՍ Է ՆԱ ՈՐՈՇՎՈՒՄ \*)

Երբ հարցնելու լինէք մի բանւորից.— ո՞րքան աշխատանքի վարձ ես ստանում, — նա ձեզ կը պատասխանէ. «Իմ տէրից ես ստանում եմ 1 մարկ <sup>\*)</sup> բանւորական օրւայ համար, միւսը կասէ — «Ես ստանում եմ 2 մարկ» եւ այլն: Կայած թէ աշխատանքի ո՞ր ճիւղումն են նրանք պարագլում, — նրանք կասեն զըրամի այլ եւ այլ քանակութիւն, որ ստանում են իրանց գ ո Ր ծ ա տ ու լ ի գ որոշ բանւորական ժամանակի կամ որոշ աշխատութեան կատարման համար, օրինակ՝ մի չափ քաթանի կամ մի սպագրական թերթի շարուածքի համար: Բայց չը նայելով նրանց պատասխանների զանազանութեան, նրանք ամենքը համաձայն կը լինեն մի կէտի մէջ. աշխատանքի վարձ — դա զըրամի այն գումարըն է, որ գործատուն վճարում է որոշ բանւորական ժամանակի կամ որոշ, կատարված աշխատութեան համար: Զետեւաբար, տէրը զրամով գ ն ու մ է նրանց աշ-

\*) Սոյն գրուածքը կազմում է մէկ ինքնուրոյն գլուխը կարել Մարքսի «Վարձու աշխատանք եւ կապիտալ» («Lohnarbeit und Kapital») վերնագրով գրութեան, որը շուտով լոյս կընծայենք առանձին բրոշուրով:

\*) Մ ա Ր Կ — գերմանական մի զրամ է, հաւասար 1 Փր. 25 սանտիմի կամ տաճկ. 5 զրուշի և կամ ռուս. 30 կոպէկի:

Ծ. Թ.

Ծ. Թ.

խատութիւնը: Իրանց կողմից էլ բանւորները զրամով ծ ա խ ու մ են նրան իրանց աշխատանքը: Միեւնոյն գումար զրամով, որով նա գնել է նրանց աշխատութիւնը, օր. 2 մարկով գոյծատուն կարող էր գնել 2 լիվո <sup>\*)</sup> շաքար կամ որոշ քանակութիւն որ եւ է ուրիշ ապրանք: Երկու մարկը, որով նա գնում 2 լիվո շաքար, կազմում են 2 լիվո շաքարի գ ի ն ը: Երկու մարկը, որով նա գնում է տաներկու ժամայ աշխատանք, կազմում են տաներկու-ժամայ աշխատանքի գ ի ն ը: Զետեւապէս, աշխատանքը մէկ ապրանք է, ոչ աւելի, ոչ պակաս, ճիշդ նոյնպէս, ինչպէս, օր., շաքարը: Առաջին ապրանքը չափում է ժամերով, երկրորդը — կշռով:

Իր ապրանքն — աշխատանքը՝ բանւորը փոխանակում է տէրի ապրանքի հետ, զրամի հետ, եւ այդ փոխանակութիւնը կատարվում է որոշ չափերով: այսչափ քանակութիւն զրամով — այսչափ աշխատանք, տաներկու-ժամայ մանուածքի համար — 2 մարկ: Բայց այդ 2 մարկը ներկայացուցիչը չէն արդեօք ամեն-մէկ ապրանքի, որ այդչափ զրամով կարելի է գնել: Իրապէս բանւորն իր ապրանքն՝ աշխատանքը փոխում է ուրիշ զանազան ապրանքների հետ եւ այն էլ որոշ չափով: Երբ գործատուն վճարում է նրան 2 մարկը, զրամով իսկապէս նա տալիս է նրան յայտնի քանակութիւն հաց, միս, հագուստ եւ այլն, նրա բանւորական օրի փոխանակը: Աւրեմն, այդ, օր., 2 մարկը ցոյց են տալիս այն յարաբերութիւնը, որի համեմատ բանող յոժը փոխանակվում է ուրիշ ապրանքների հետ, այսինքն, նա արտայայտում է բանւորի աշխատանքի փոխանակող արժէքը, որ արտայայտված է զրամով, կոչվում է գ ի ն այդ ապրանքի: Զետեւաբար, բ ա ն լ ո Ր ա կ ա ն

\*) Մ ի Լ ի վ ը ն ու ն ի 500 գրամ: Ծ. Թ.

վճար խօսքն աշխատանքի գնի միայն մէկ ուրիշ անունն է, անունն է այն ինքնակերպ ապրանքի, որի կրողը յայտնվում է ոչ ուրիշ բան, եթէ ոչ մարդկային մարմինը, միսն ու արիւնը:

Սերցնենք որ եւ է բանւոր, օր., ոստայնանկ (ջուլ-հակ): Գործատուն նրան տալիս է դաղգեաճ ու մանած: Բանւորը նստում է դաղգեաճի առջեւ, եւ մանածից ստացվում է քաթան: Տէրը վերցնում է այդ քաթանը եւ ծախում է նրան, օր., 20 մարկով: Ոստայնանկի բանւորական վճարն արդեօք կը լինի մի մասն այդ քաթանի, այդ 20 մարկի, մի մասն իր աշխատանքի արդիւնքի: Ամենեւին: Բանւորն արդէն ստացել է իր աշխատանքի վարձն իր հիւսած քաթանը ծախելուց դեռ շատ առաջ: Գործատուն նրան տալիս է նրա աշխատանքի վարձը ոչ այն դրամից, որ ինքը դեռ պէտք է ստանայ ծախած քաթանի համար, այլ հետեւաբար, պահեստի դրամից: Ինչպէս դաղգեաճն ու մանածը ոստայնանկի արդիւնքները չեն, բանի որ այդ գործիքները նա ստացել է գործատուից, ճիշդ նոյնպէս նրա արդիւնքը չը լինի եւս այն ապրանքը, որը նա ստացել է նոյն իսկ իր ապրանքի՝ աշխատանքի փոխանակը: Արող է պատահել, որ գործատուն բողբոջին չը գտնէ իր քաթանը գնող մէկը: Արտելի է նոյնպէս, որ նա քաթանը ծախելով՝ ձեռք չի բերի իր ծախած բանւորական վճարն անգամ, կամ, ընդհակառակն, նա կարող է նրան ծախել շատ ձեռնտու կերպով: Այդ բողբոջի հետ բանւորը ոչ մի գործ չունի: Արպէս իր ունեցածի, կապիտալի, մի մասի գնով գործատուն գնել է հում արդիւնքը — մանածն ու բանող գործիքը — դաղգեաճը, ճիշդ այդպէս էլ միւս մասով գընում է նա ոստայնանկի աշխատանքը: Անելով այդ գնելիքները, որոնց թուումն էր նաեւ քաթանն արդիւնաբերելու համար անհրաժեշտ աշխատանքը, — նա սկսում է

արդիւնաբերութիւնը միակ իրան պատկանող հում արդիւնքներով ու գործիքներով. այդ վերջինների թւին է վերաբերում, ի հարկէ, եւ մեր բարի ոստայնանկը, որին նոյնքան բաժին է հասնում նոյն արդիւնքից կամ նրա գնից, որքան եւ դաղգեաճին:

Այսպէս, բանւորական վարձը չէ կազմում բանւորի բաժինը իր արդիւնաբերած ապրանքի մէջ: Բանւորական վարձն արդէն ունեցած բողբոջ ապրանքներին այն մասն է, որով գործատուն գնում է արդիւնաբերող աշխատանքի որոշ քանակութիւն:

Հետեւաբար, աշխատանքը մի ապրանք է, որի տէրը, վարձու բանւորը, ծախում է նրան կապիտալիստին: Ի՞նչու է նա նրան ծախում: — Ար ապրէ:

Իսկ աշխատանքը բանւորին յատուկ կենսական գործունէութիւնն է, նրա կեանքի արտայայտութեան եղանակն է: Իւ հէնց այդ կենսական գործունէութիւնը նա ծախում է մէկ ուրիշ անձի, որպէս զի ապահովացնէ իր գոյութեան միջոցները: Այդպիսով, բանւորի կենսական գործունէութիւնը նրա համար կեանքի միակ միջոց է: Նա աշխատում է ապրելու համար: Աշխատանքը նրա համար յայտնվում է ոչ թէ կեանք, այլ զոհաբերութիւն է կեանքի յայտնի մասի: Գա — ապրանք է, որ նա առաջարկում է ուրիշին: Նրա աշխատանքի արդիւնքն էլ չէ կազմում նրա գործունէութեան նպատակը: Ոչ թէ մետաքսը, որ նա հիւսել է, ոչ թէ ոսկին, որ նա փորել հանել է հանքերից, եւ ոչ թէ պալատը, որ նա կառուցել է — ոչ թէ դրանք են, որ նա արդիւնաբերում է իրան համար: Իրան համար նա արդիւնաբերում է — աշխատանքի վարձ. մետաքսը, ոսկին, պալատը նրա համար արտա-


յայտում են միայն գոյութեան միջոցների որոշ բանահուծիւն. գուցէ քաթանի վերաբերու, պղնձէ գրամ կամ ստորեկրեայ յարկում մի բնակարան: Գէ բանւորի համար էլ որն օրւայ մէջ 12 ժամ մանում է, գործում է, պտտեցնում է, կառուցանում է, փորում է, քար է կոտրում եւ այլն, ծառայում է նրան արդեօք իբրեւ նրա կեանքի արտայայտութիւն այդ տասներկու-ժամեայ մանելը, գործելը, հարթելը, պտտեցնելը եւ քարեր կոտրելը: Ընդհակառակն, կեանքը նրա համար սկսում է միայն այն ժամանակ, երբ այդ գործունէութիւնը դադարում է. — ձաշե սեղանի առջեւ, դահլէտան նստացանի վրա, անկողնում: Տասներկու-ժամեայ աշխատանքը նրա համար ոչ մի միտք չունի իբրեւ մանելու, գործելու, պտտեցնելու գործողութիւն եւ այլն. նա նշանակութիւն ունի նրա համար միայն իբրեւ աշխատանքի վարձ, որը նրան կարելիութիւն է տալիս ուտելու, գնալու դահլէտուն, պառկելու անկողնում: Եթէ շերամի որթը հիւ էր լոկ նրա համար, որ պահպանէր դրանով իր գոյութիւնն իբրեւ թրթուռի, այդ դէպքում նա կը լինէր իսկական վարձու բանւոր:

Աշխատանքը չէ եղել ապրանք ամեն ժամանակ. ամեն ժամանակ նա չէ եղել վարձու աշխատանք, այսինքն ազատ ապրանք: Ստրուկը չէ ծախում իր աշխատանքը ստրկատէրին, նոյնպէս, ինչպէս եւ դոմեշը չէ ծախում իր աշխատանքը գիւղացուն: Սարուկն իր աշխատանքի հետ միասին միանգամից ընդ միշտ ծախվում է իր տէրին: Նա — ապրանք է, որ մի սեփականատէրի ձեռքից կարող է անցնել մէկ ուրիշ սեփականատէրի ձեռքը: Նա ինքն — ապրանք է, բայց նրա աշխատանքը իր ապրանքը չէ: Ճորտ (աւատական) գիւղացին ծախում է իր աշխատանքի միայն մի մասը: Այլ թէ նա է հողի սեփականատէրից վարձ ստացողը, այլ, ընդհակառակն, հողատէրն է շատ անգամ ստանում նրանից

առբբը: Ճորտը կապված է իր հողին, եւ իր տէրին տալիս է իր հողի արդիւնքները:

Ընդհակառակն, ազատ բանւորն ինքը ծախում է իրան, եւ այն էլ ծախում է մաս առ մաս: Հրապարակային աճուրդով ծախում է նա 8, 10, 12, 15 ժամ իր կեանքից, օր օրի վրա, նրան, որն աւելի է տալիս, նրան, որ տէրն է հում արդիւնքների, բանւորական գործիքների եւ գոյութեան միջոցների, այսինքն — գործատուին: Բանւորը չէ պատկանում սեփականատէրին, նա չէ կապված հողի հետ, բայց նրա օրական կեանքի 10, 12, 15 ժամը պատկանում են նրան, ով գնում է այդ ժամերը: Բանւորը թողնում է գործատուին, որի մօտ վարձվել է, երբ ինքն ուզում է, եւ գործատուն ինքն արձակում է նրան, երբ այդ ձեռնտու է տեսնում, այսինքն երբ նա չէ կարողանում այլ եւս հանել նրանից կամ ոչ մի, կամ ցանկալի օգուտը: Բայց բանւորը, եկամտի միայն մէկ աղբիւր ունենալով — իր աշխատանքի ծախելը, չէ կարող ձգել թողնել գնողն երի ամբողջ դասակարգն, այսինքն կապիտալիստներին դասակարգը, եթէ ոչ միայն հրաժարվելով ի սեփական գոյութիւնից: Նա պատկանում է ոչ թէ այս կամ այն գործատուին, այլ գործատուն երի ամբողջ դասակարգին. եւ այն էլ զեռ ինքը պէտք է հոգայ իրան համար գործ գտնէ, այսինքն գտնէ իրան համար մի գնող գործատուների այդ դասակարգից:

Աշխատանքի վարձ — դա, ինչպէս տեսանք, գինն է մէկ առանձին ապրանքի — աշխատանքի: Աշխատանքի վարձը որոշվում է, ուրեմն, միեւնոյն օրէնքներով, որոնցով որոշվում է ամեն-մէկ ուրիշ ապրանքի գինը:



904.

5

2013

«Ազգային գրադարան»



